

Message of Archbishop Father Nishan Karakehayan  
at the event of JMP-L's 50<sup>th</sup> anniversary, on July 22, 2016

## **Արքեպիսկոպոս Հայր Նշան Գարագեհեանի**

### **Պատգամը՝**

## **Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի 50-ամեակին առիթով**

Ուրբաթ, 22 Յուլիս, 2016

Սկսելէ առաջ, թոյլ տուէք որ նախ իմ շնորհաւորութիւններս յայտնեմ Յոբէլենական այս հանդէսը յղացողներուն եւ կազմակերպողներուն:

Իսկապէս արժանի էր մեր Յոբէլեարը:

Եւ իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ որ՝ ինձի, խոնարհիս, վստահեցաք Երջանկայիշատակ, Վարդան Ճինիշեանի նման հսկայի մը մասին արտայայտուելու պատիւը: Յուսամ յուսախաբ չընել:

Դժբախտաբար, բախտը չեմ ունեցած զինք անձամբ ճանչնալու, սակայն լրջօրէն վերլուծելով Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի բարեսիրական հսկայական կազմակերպութեան բազմակողմանի եւ այնքան բազմատեսակ ծրագիրներու գործադրութիւնը, համոզուած եմ որ, Վարդան Ճինիշեան շատ մօտէն ճանչցած է մեր ժողովուրդին տառապանքն ու կարիքները:

Ան մեր ժողովուրդին ցաւերուն ու չքաւորութեան հանդէպ պարզապէս ցաւակցական եւ հարեւանցի մօտեցում չէ ունեցած, այլ հարազատ եւ սրտցաւ մարդու մը մտահոգութեամբ՝ եւ մտատանջութեամբ իր բարեգործական Ձեռնարկը, շատ յաջող ծրագրած եւ ամուր հիմերու վրայ հաստատած է:

Բայց ինչ որ աւելի կարեւոր ու կենսական է քրիստոնէայի մը համար եւ արդիւնաշատ դարձուցած է Վարդան Ճինիշեանի բարեգործութիւնը՝ եղած է իր մօտեցումի կերպը, որ ոչ միայն պարզ մարդասիրութիւն չէ, այլ է քրիստոնէական եղբայրասիրութիւն, որ Աստուծոյ սէրէն մղուած, որպէս Քրիստոսի սպասաւոր՝ նուիրուած է ծառայութեան աղքատին եւ լուսանցքի վրայ ձգուած իր հայ եղբայրներուն:

Մենք եւս, հետեւելով Վարդան Ճինիշեանի բարի օրինակին, որպէս հաւատացեալ քրիստոնէաներ, պարտինք ապրիլ Քրիստոսի հետ եւ ծառայել աղքատներու եւ լքեալներու ինքնաբաւութեան համար:

Արդարեւ, Աստուած կեանք տուած է մեզի ու գործ կը սպասէ մեզմէ, ինչպէս պարտիզպանը պտուղ կը սպասէ իր տնկած ծառէն: Այն պարագային որ պտուղ չի ստանար կը ստիպուի կտրել ու կրակը նետել:

Աստուած չի գոհանար միայն տերեւ տուող ծառէն: Այս մասին արդէն շատ յստակ ըսած է. «ամէն ծառ որ բարի պտուղ չի տար, կը կտրուի ու կրակը կը նետուի»:

Աստուծոյ այս խօսքը ուղղուած է նաեւ մեզմէ իւրաքանչիւրին:

Եւ այնքան կարելոր է այս ճշմարտութիւնը, որ մեր վերջին դատաստանի օրը, Յիսուսի մեզի տալիք յաւիտենական վճիռը, կախում պիտի ունենայ մեր տուած բարի կամ չար պտուղներէն:

Սակայն այսպէս մտածելը, այսօրինակ տրամաբանելը եւ նման ճանապարհով առաջնորդուիլը՝ խոր հաւատք կը պահանջէ:

Եւ Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի գոյութիւնն ու գործունէութիւնը, 50 եւ աւելի տարիներու ընթացքին, ցոյց տուած է, որ անոր լուսահոգի հիմնադիրը, Պրն. Վարդան Ճինիշեան, խոր ու զօրաւոր հաւատքով օժտուած իսկական մարդ եղած է:

Յիրաւի, ան ոչ միայն զօրաւոր հաւատքի տէր, այլ նաեւ համեստ ու խոնարհ, պարզ ու աւետարանական հոգիի տէր մարդ եղած է. Հեռու ցուցամոլութենէ, ծածուկ եւ անձանօթ մնալ ուզող:

Ահա թէ ի՞նչու «անձանօթ բարերար»ի անուան տակ եւ «պնակ մը կերակուր»ով սկսած է իր բարեգործական հսկայական ծրագիրը, Հալեպի մէջ:

Ես ինքս, միայն 1967ին լսած եմ իր անունը, Վարդան Ճինիշեան, երբ Պրն. Դաւիթեանի, «Գարաքէօզեան» հաստատութեան տնօրէնին, նախաձեռնութեամբ, Պուրճ Համմուտի մէջ, բացուեցաւ Ճինիշեան օրհնեալ կեդրոնը, որմէ մինչեւ այսօր կ'օգտուին հարիւրաւոր ընտանիքներ ու միայնակ մնացած չքաւորներ:

Աւելի քան 50 տարիներէ ի վեր, չքաւորներու Հայր դարձած է աստուածահաճոյ, ազգանուէր, մեծահամբաւ եւ մեր ժողովուրդին խոր երախտագիտութեան արժանացած մեր Յոբելէարը, Վարդան Ճինիշեան:

Եւ հարկ է խոստովանիլ, թէ մեր ժողովուրդին ազնուագոյն զաւակներէն մին կը հանդիսանայ ան ներկայիս:

Թոյլ տուէք շնորհակալութիւն ու երախտագիտութիւն յայտնել նաեւ, մեր ժողովուրդին կողմէ, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի կտակը գործադրող Երիցական Եկեղեցոյ յարգարժան պատասխանատուներուն, ինչպէս նաեւ, վերոյիշեալ Ձեռնարկին գործադրութեան աշխատող հին ու

նոր, բոլոր դասակարգի պաշտօնեաներուն, որոնք նուիրումով ու խղճմտօրէն, աւելի քան հինգ տասնեակ տարիներէ ի վեր կը տքնին Ճինիշեան կտակի բժախնդիր իրականացումին: Մեր ջերմ շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը կը յայտնենք բոլորին, եւ մեր խոնարհ աղօթքները կը բարձրացնենք առ Աստուած, որպէսզի իր լիառատ օրհնութիւններն ու շնորհները պարգեւէ իրենց:

Ես վստահ եմ, որ հիմա, երկնքէն, կը հրճուի ու կը ցնծայ մեզ հոս հաւաքուած տեսնելով:

Ի՞նչու, պիտի հարցնէք:

Նախ, որովհետեւ, հոս մեր ներկայութիւնը, «Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի Յոբելէնական 50 ամեակի առիթով, շնորհակալական եւ երախտագիտական արտայայտութիւն մըն է առ Աստուած, որ Հայ բազմաշարժար ժողովուրդին շնորհած է, Վարդան Ճինիշեանի նման, Աստուծոյ սիրով տոգորուած եւ իր հայ եղբայրներուն գործով լեցուն՝ հրաշալի անձնաւորութիւն մը:

Վստահ եմ մեր երջանկայիշատակ բարերարը ինքն ալ, երկնքէն պիտի օրհնէ ու բարեխօսէ մեզի համար, եւ մեր երախտագիտութեան զգացումներէն յուզուած պիտի յիշէ Վահան Թէքէեանի խօսքը.

«Կեանքէն ինձի ի՞նչ մնաց,

Ինչ որ տուի ուրիշին...

Եւ ինձ դարձաւ քաղցրացած»:

Եւ տուաւ, տուաւ ո՛չ միայն իր կենդանութեան, իր երկրաւոր կեանքին ընթացքին, իր ճակտին քրտինքով եւ Աստուծոյ օգնութեամբ ամբողջ շահածը, այլ նաեւ կը շարունակէ տալ մինչեւ այսօր ու դեռ շարունակելու է երկար:

Այո՛, ոչինչ պահեց իր անձին, բայց իր ժողովուրդին կը շոյալէ ինչ որ ունէր. Հալեպէն սկսեալ մինչեւ Իրաք, Լիբանան, Պաղեստին, Հայաստան եւ այլուր:

Իր նպատակն էր առաւելագոյն չափով ամոքել չքաւոր հայրենակիցներու ֆիզիքական ու հոգեկան ցաւերը: Քաջալերելով ընկերային բարօրութեան ձգտող բարգաւաճման ծրագիրները՝ օժանդակելու համար կարիքաւորներուն:

Իր բարեսիրական ծրագրին մեջ, ո՛չ մի տեսակի կարիքաւոր չէ մոռցուած:

Նկատի առնուած են՝ ծերն ու հիւանդը, անդամալոյծն ու աղքատը, այրին ու որբը, ընկերային, հոգեկան եւ մարդկային բոլոր խեղճութիւնները:

Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը, իր ծրագիրներով եւ ինամատարական գործունեութեամբ, կը շարունակէ իրականացնել, ո՛չ միայն վերոյիշեալ բոլոր բարեգործութիւնները, այլ կազմակերպած է նաեւ մանկամտուր եւ աշխատանք հայթայթող գրասենեակ, եւ դեռ այլ ինամատար մարմիններ:

Այս բոլորէն գատ, Վարդան Ճինիշեանին մենք կը պարտինք նաեւ ուրիշ կարելոր մեծ բարիք մը.

մեզի ժառանգ թողաց իր ազնիւ կեանքի բարի օրինակը:

Արդարեւ, իր կեանքով ու գործով՝ մեզի սորվեցուց թէ ինչ որ մեզմէ իւրաքանչիւրը ունի՝ Աստուծոյ պարգեւն է. Նիւթական թէ մտային, բարոյական թէ հոգեկան բոլոր բարիքները: Եւ Աստուծոյ մեզի տուածները, բոլոր ընծաները, նոյնիսկ եթէ մենք, մեր աշխատանքով ու քրտինքով զանոնք ճոխացուցած ենք, Աստուծոյ կը պարտինք: Եթէ կրցած ենք որեւէ բարիք ընել մեր նմաններուն, կրցած ենք ընել Աստուծոյ օգնութեամբ, որովհետեւ «առանց Աստուծոյ ոչինչ կրնանք ընել»:

Նաեւ, երկրորդ ու շատ կարելոր ճշմարտութիւն մը, զոր շատ յաճախ մենք կը մոռնանք, բայց մեր երախտաշատ բարերարը, Վարդան Ճինիշեան դարձեալ իր կեանքով ու գործով մեզի կը յիշեցնէ, հատելեալն է:

Աստուծոյ մեզի տուած պարգեւներն ու բարիքները, ըլլան անոնք բարոյական, նիւթական կամ այլ տեսակի, միայն մեզի համար չեն տրուած: Զանոնք, պարզապէս, Աստուած վստահած է մեզի, որպէսզի պտղաբերենք, մատակարարենք, եւ բաժնենք այդ պտուղները, բաժին հանենք անոնցմէ նաեւ ուրիշներուն: Այլ խոսքով՝ օգնենք Աստուծոյ մեզի տուածէն, բոլոր անոնց որոնց կրնանք եւ մեր կարիքն ունին:

Ահա թէ ինչ ըրաւ մեր մեծահոգի բարերարը, իր մեզի տուած միւս բարի օրինակով, զոր դեռեւս ինքն ալ իր կարգին, սորվեցաւ իր բարեպաշտ ծնողքէն, ինչպէս նաեւ Գարաքեօզեան ընտանիքէն, որոնց քով պաշտօնեայ եղած էր:

Մեզմէ իւրաքանչիւրն ալ կրնայ օրինակ առնել Վարդան Ճինիշեանէն, եւ իր կարգին, իր կարողութեան չափով, օգտակար դառնալ իր նմանին. յատկապէս ներկայիս՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Արցախի մէջ եղող մեր հայրենակիցներուն:

Հայ ժողովուրդը իր դէմ գործադրուած ցեղասպանութենէն, ջարդէն 100 տարի ետք ալ, դեռ չէ յաջողած գաղթականի ցուպը նետել. որովհետեւ մինչեւ այսօր՝ կայուն, մնայուն եւ ընտանիքը ապահով պահելու վերջնական տեղ՝ դեռ չէ գտած, նոյնիսկ իր սեփական Հայրենիքին մէջ:

Այսօր ալ՝ աղքատ Ղազարոսներ կան աշխարհի վրայ եւ նոյնիսկ մեր հայրենիքին մէջ:

Եւ որքան գեղեցիկ եւ յուզիչ կերպով կը պատմէ Յիսուս Աղքատ Ղազարոսին եւ հարուստին առակը:

Կողք կողքի, զուգահեռ երկու տարբեր ճանապարհներով կ'ընթանան կարծէք, աղքատի եւ մեծահարուստի առօրեան. Մինչ իրենց կեանքի պայմանները հակասական են եւ երբեք չեն խաչաձեւուիր:

Հարուստին դուռը փակ է Ղազարոսի առջեւ, որ գետին պառկած է եւ հարուստին սեղանէն թափուած փշրանքներուն կը սպասէ փորը կշտացնելու հանար: Մինչ հարուստը բեհեզ եւ ծիրանի հաքած, շքեղ խնջոյքով կ'ուրախանայ: Ղազարոս, վերքերով ծածկուած, անոր դրան առջեւ է եւ շուներ կը լիզեն անոր վերքերը:

Յիսուսի ներկայացուցած այս վերոյիշեալ տեսարանը չէ՞ք կարծեր որ ներկայ ժամանակներու մարդկային ընկերութեան պատկերը կու տայ:

Կեանքը կը նմանի շոգեկառքի մը որ անվերջ կը քալէ: Երբեմն երբեմն կանգ կ'առնէ: Ամէն կենալուն նոր ճամբորդներ ներս կը մտնեն: Մինչ ուրիշներ կ'իջնեն: Կ'իջնեն առաջին կամ երկրորդ կայանին, կամ ալ կայաններէն մէկուն: Երբ ոմանք կ'իջնեն, ուրիշներ կը բարձրանան՝ երթալու համար իրենց գիւղը կամ քաղաքը, իրենց տունը կամ գործին:

Վերջին կայանին բոլորն ալ կ'իջնեն:

Շոգեկառք նստիլը նպատակ մը չէ, այլ՝ անով տեղ մը հասնիլը:

Այս ճամբորդութեան ընթացքին, նոր մտնողները նորածիններն են, իջնողները՝ ննջեցեալները:

Շոգեկառքէն իջնել կը նշանակէ ճամբորդութիւնը աւարտել եւ Աստուծոյ ներկայանալ: քննութենէ անցնելու համար, այնպէս ինչպէս օտար երկրի սահման անցնող ճամբորդներ, որոնց ունեցածը քննութենէ կ'անցնի մաքսատան պաշտօնեաներու կողմէ: Մա տարբերութեամբ որ մաքսատան պաշտօնեաները ճամբորդներու ունեցած նիւթական ապրանքները կը քննեն, մինչ Աստուած՝ մարդուն գործերը:

Ինչպէս գործերը կը փնտռէ Աստուած իր քննութեան ընթացքին: Կարդանք Ս. Աւետարանը.

«Եկէք, հօրս օրհնեալները, ժառանգեցէք արքայութիւնը, որ աշխարհի սկիզբէն ի վեր պատրաստուած է ձեզի: Որովհետեւ ես անօթեցայ եւ դուք կերակուր տուիք ինձի: Ծարաւեցայ, եւ դուք խմցուցիք ինձի, պանդուխտ էի եւ դուք ընդունեցիք զիս, մերկ էի եւ դուք զգեստաւորեցիք զիս, հիւանդ էի եւ

դուք այցելեցիք ինձի, բանտն էի եւ դուք եկաք որպէսզի տեսնէք զիս» (Մատթ. ԻԵ. 34-36):

Կ'աւարտեմ խօսքս յիշելով բոլորիս համար Յիսուսի խօսքը. «Վաճառեցէք ձեր ինչքերը, տուէք իբրեւ ողորմութիւն եւ շինեցէք ձեզի համար անմաշ քսակներ եւ անհատնում գանձ երկնքի մէջ, ուր ո'չ գողը կը մօտենայ, ո'չ ալ ցեցը կը կրծէ: Որովհետեւ հոն ուր ձեր գանձն է, հոն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը» (Ղուկ. ԺԲ. 33-34):

Միշտ օրինեալ ըլլայ յիշատակը Վարդան Ճինիշեանի եւ անոր բարի եղբայրսիրական կեանքը օրինակ հանդիսանայ մեզի եւ մեր բազմաթիւ ազնի հայրենակիցներուն: